# ՔԱՐԷ ԱՂՕԹՔ

*Որքա՜ն համբոյր կայ կնքուած քո ճակատին,*
*Խաչքա՛ր խոհուն, քարէ աղօթք ու արբութիւն:*
*Որքա՜ն աղերս ու պաղատանք կայ թաքնուած*
*Քո խորշերում, խաչքա՛ր յոյսի՝ սիրով ցօղուած:*

*Քարակերտեալ դու ներշնչանք, յոյսի կոթող,*
*Մութ խաւարում սիրոյ լապտեր պլպլացող,*
*Անմահ Փրկչի յաղթող նշան դու շողարձակ,*
*Կեանք զգեցած դու մեր հաւատ՝ քարէ քանդակ:*

*Խոնարհուում եմ ես քո առաջ եւ ծնրադրում,*
*Չարն զգետնող խորհրդանիշ դու փրկութեան,*
*Սիւն չես բնաւ անարգանքի ու պարտութեան,*
*Այլ յարութեան շունչ ես ծաղկուն կեանքով բուրեան:*

*Համբուրելով քեզ բիւր անգամ ես ծնրադիր՝*
*Համբուրում եմ հայ վարպետի ջերքը ճարտար,*
*Տէ՛ր, այդ ջերքում որքա՜ն հաւատ դու խտացրիր,*
*Որ արարեց քարից աղօթք, խաչն այս թրթիռ:*

**ՆԵՐՍԷՍ ԱՐՔ. ՊՈԶԱՊԱԼԵԱՆ**

digitised by A.R.A.R.@